# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 742-Ա « 03 » ապրիլի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1. Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց», «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց», «Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան», «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան», «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն», «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն», «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն», «Երևան» փողային նվագախումբ», «Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հ.հ. 1 - 30 հավելվածների:

2) «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հ.31 հավելվածի:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո,

2) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված վճարովի ծառայություններից փաստացի մուտքերի գերակատարման դեպքում` եռամսյակային կտրվածքով մինչև 10%-ի չափով վարչական անձնակազմին հատկացնել լրացուցիչ պարգևատրում բացառապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո,

3) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի ու սույն որոշման 1-ին կետով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի վրա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441